

# ՀԱՅՐԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՌՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ



### Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ա Կ Ն Ա Ր Կ

#### ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեր ի մի հաւաքած տեղեկութիւնները ջրաշինարարական գործերի մասին այժմ Հայաստան անունը կրող երկրամասի վերաբերեալ, որ այդ երկրում յատկապէս քաղաքակիրթ և բարեկիրթ կենցաղը ստեղծելու ամենահիմնական խարխիսն է, կարող են ընթերցողին իրական պատկեր տալ, թէ ննագոյն քաղաքակիրթական կիզակէտում բնակութիւն հաստատած ժողովուրդները ո՞ր չափով են բարեբարեւել իրենց վրայ իշխող օտարազգի եւ բնիկ տէրերից: Այդ տէրերի ստեղծած բարեբարեւի կամ աւելի ուղիղ չարեքները պատկերն աւելի իրական է պատկերանում մեր աչքերին եթէ թւենք այն աշխատանքները որ կատարել է Հայաստանի ներկայ Պոր-կրդային Հանրապետութիւնը, ոչ թէ հազարամեակներում, այլ իր գոյութեան ոչ երկու տասնամեակ ընդգրկող ակնթարթում:

Մեր երկրի խոշորագոյն ջրերի գործերի գլուխ կանգնած է ինջիներ Յովսէփ Տէր Աստուածաբանին: Մեր կուսակաւութիւնը նրան յիմնից Շիրակի բարձրաւանդակ գաւառի ոռոգման գործը. նա էր որ փայլուն կերպով, ամենակարճ ժամանակում գլուխ կանեց և աւարտեց «Շիրարիւք», որ իբրև սկզբնական գործ հայ վարպետներ և գործաւարներ պատրաստեց հետեւեալ աւելի մեծագոյն ձեռնարկների համար: Նոյն ինջիները շրթայեց մեր մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հայրենիքի և նրա երգած Դեբեմ-Ձորագետը, ծառայայնելով 30,000 օւստանոց էլէք-

տրակայանին, որով լուսաւորում է պատմական հնութիւններով այնքան հարուստ Լոռին, հալում է մեր երկրի հարստութիւն կազմող պղնձահանքը, էներգիա է մատակարարում Կիրովականում — նախկին Ղաբաքիլիսա — քլմիական զանազան արտադրանքների հսկայ գործարանին: Այժմ նոյն Տէր Աստուածաբանը գլուխ է կանգնած առասպելական հսկայ մի գործի. «Անվան-Ջանգու կասկաղին», այն է օգտագործել հայկական ամենարածր տեղում թաւած վիթխարի ջրամբարը եւ տարէ ցտարի բաց թողնելով այդ ջրապաշարը, Ջանգու գետի ափերին կառուցանել յաջորդաբար տաս էլէքտրակայաններ, որ Հայաստանին պիտի տան կէս միլիոն ձիու ուժ, բազմապիսի վիթխարի գործարաններին և ձեռնարկներին անընդհատ ուժ մատակարարելով և մեր ժողովրդին յարստե բարեկեցութեան ազբիւր ծառայելով: Այդ գործարաններից երկու հսկայ արգէն պատրաստ են. Դավառուի ցեմենտինը և Երեւանի կաոէլիկինը, չէրէժ մի քանի փոքրերը. պատրաստ է նաև կուսկաղի հըսկայ կայաններից մէկը, «Բանաքնոգեքը», 60,000 անոց էլէկտրակայանը, որի բացման օրը որոշւած է սոյն թւի Յուլիսի 15ը:

Այդ վիթխարի ձեռնարկի մէջ կարեւորագոյն տեղ է զբաւելու նաև ոռոգման գործը. Սևանից հոսող ջուրը իր սկզբնական նպատակը լրացնելուց յետոյ կուտակւելու է ծրագրած մեծ ջրամբարներում և ոռոգելու է Հայաստանի անապատներից 20,000 հեկտար տարածութեամբ «Ղեւեր»:

Ամեն մի նոր ձեռնարկի մասին մայրաքաղաքի եւ գուաուական բազմաթիւ թերթեր, որ կարգադրել եւ շատ բան մտապել էի, ուստի զիմեյի կրեանում հենց էն զլիւից որ ժամանակին տրել են նոյնպէս ջրաշինարարական գործով գրաւող ինչի ներ Գրիգոր Երամազանեանին եւ խնդրեցի լրիւ տեղեկութիւններին: Նա ինձ ցոյց տուեց մի գիրք, մեքենայով գրած, լրիւ տեղեկութիւններով, որ պատրաստած է իրի պաշտօնական կեկուցում եւ ներկայացրած է Հոյաստանի եւ Մասկովայի կենդանական իշխանութիւններին: Այդ պատկառանք ազդող գրաւոր փաստաթուղթից ցոյց է տալիս, թէ ի՞նչ խոշոր գումարներ են տարէ ցտարի ծախսում երկրի բոլոր անկիւնների տոգման գործը առաջ տանելու համար. տրած են մանրամասն հաշիւներ, յատարաւոր, կատարած եւ ընթացքի մէջ եղող աշխատանքները լրիւ տեղեկութիւններ, պարզարանւած բազմաթիւ լուսանկարչական պատկերներով: Այդ զեկոյցը կատարեալ պատկեր է տալիս, թէ գուցէ տոտ տարի չանցած, Հայաստանում չեն մնալ այլեւ ամայի եւ անըզի վայրեր որ կարգաւարւած կը լինին մեր լեռնային գետերի բոլորստ եւ գարնան հեղեղներով ահագին մշակած հողամասեր ոչնչացնող ընթացքը, որ վերակուսկնած կը լինին պատմական առուները նորագոյն տեխնիկայով եւ բոլոր գիւղերը, բացի տոգման նըպատակների, նաեւ մարդկանց ու կենդանիների համար խմելու առատ եւ առողջարար ջուր կ'առնենան:

Աշխատանքները կատարւում են ծըրազըւած եւ ուսումնասիրւած եղանակով ըստ այսմ:

Ա. — Անց են կացրել բւլթրովին նոր առուների մեծ ե փոքր, ամայի ե երեք չըրւած հողամասեր մշակելու ե լաւագոյն բերք ստանալու համար: Ես կը յիշատակեմ միայն զիսաւարները: Առաջի տեղը բռնում է Երրառուեն, 1500 մետր ծովի մակերեւոյթից բարձաւանդակի վրայ, որ առողջելու է 11,750 հեկտար տնջըղի տարածութիւն, իսկ մի մասը նորից թափուելով իր մայր գետի՝ Ախուրիանի ճիւղի մէջ, արդէն ծառայում է Լինինակոնի մեծ հիդրոէլեկտրակայանի համար, որի ոյծից օգտուում են քաղաքի լուսաւորութեան, Տեքստիլ

մեծ գործարանի եւ մսադործարանի մերձակայ գիւղերի ե այլ կտրիքների համար:

Երևան քաղաքում, առաջին հիկտրակայարանի ջուրը գետը թափելու տեղից սկսած նախանցեալ տարի, ընդամենը 8 ամսայ կարճ ժամանակամիջոցում, մի մեծ առու շինեց, որ հասնում է Ղամարուի ջրվանդ ահագին տարածութեամբ բտմարկամշակման համար անապատ հողեր տոգելու, ե քաղաքի մէջ կառուցած երկրորդ հիդրոէլեկտրակայանին ոյծ տալու, արուհեաեւ առաջի կայարանը ամենակին չէր բաւարարում օրէցոր աճող, արդէն 150,000ր անց ազգաբնակութեան աւօրեայ կտրիքների ե մանաւանդ նոր կառուցւած գործարանների:

Աւարտել է Մեկրի ջրվանում կարճեւան գիւղի տունը, որ սկսեց 1923 ին ե վերջայտա 1932, շնորհիւ այն բարդ պայմանները, որ կապւած էր այդ շինարարութեան հետ: Սկսւած է Մեկրի գետի վրայ մեծ ծաւալով աշխատանքներ՝ հիդրոէլեկտրակայանի ե պատգման համար, որ զլուսկուց յետոյ կառուցական Արեւիք գետունը, պտղարուծութեան համար ամենաաչքի ընկնող տեղը Հոյաստանում, ընդարձակելու է իւր արտադրանքը մի քանի տնգամ:

Բ. — Կարգաւարում են գոյութիւն ունեցող ջրամատակարարումը նոր պահանջներից յարմարեցնելով: Արաքս գետը իր փերը եկերող բարձր ծառերից ազատում ե Արարատեան գաշա է դուրս գալիս իր աջ փերը գտնող Ղարաղալա-Երուանդակիրտ քաղաքի աւերակներից մի փոքր ներքեւ, Արմուշիկի բլուրի մերձակայքում: Հէնց այդ տեղում հնագոյն ժամանակներից, նրա ձախ փերին, վերցրւած են մի շարք առուների գուգահեւ, մէկը միսից ոչ շատ հեռու: Այդ առուներից հնագոյնն է Ուրարտեան Արգիշտիւս թագաւորի լիւնածը, որ իր ձեռնարկը յաւերժացրի է առուի վրայ մեծ ժայռի երեսին փորած սեպածեւ արձանապրութեամբ: Այդ փոքր առուները, մի կամ մի քանի գիւղերի յատուկ, թէ նորագոյն համար տարեկանարի մեծ ծախքեր են պահանջում ե թէ թանգարժէք լրիւ ահպին անօգուտ փտնում է տեղի ունենում: Կառավարութեան կարգադրութեամբ նորագոյն տեքնիկայով կա-

առաջուց և Արգարապատի առոտն»։ որ մինչև այժմ ջրած հողերի կրկնակի տարածութեանն է բաւարարելու, և մեծաքանակ անապատ՝ բամբակի, խաղողի, արծեքաւոր պտուղների գաշակը են դառնալու։ Դրանից աւելի կանոխ կիմնովին աւարտ հանուց էջմիածնի վանքի պարտաստած և ոչ աւարտած, Վինինեան» անունով վերականգնուած անուն և այն անապատ տարածութիւնները որ կային էջմիածնից Երեան տունող ճանապարհի վրայ, արդէն պարտաստած այգիներ են լաւագոյն խաղողի, զեղձի և այլ պտուղների, բոլորը սՊետական Սովխոզներ-սովետական անտեսութիւններ, որինսկիւր մշակամբը, համեմատ գիւղատնտեսական լաւագոյն պահանջներին։

Գ. — Կան այնպիսի ջրեր, որ իրենց չըջապատի բերրի հողատեսերից շատ խոր են ընկած և ինքնահոս եղանակով անկարելի է օգտագործել։ Այդ ջրերը դարձրով անօգուտ հոսել են, շատ անգամ, իրենց կազմած ճահիճներով, իբրև մալարիայի բուծարաններ, չըջապատի բնակիչներին չարիք պատճառելով։ Ամենայայտնին է էջմիածնից եօթ վերտ արեւմուտք ընկած Աւ ջուր գետը, պատմական Մեծամորը։ Այդ գետը իսկապէս հսկայ մի աղբււր է, որ մի քանի տեղերից դուրս ժայթքելով ակնհայտ երկու վերտաշափ հեռաւորութեան վրայ ոտով աննոցանիլ մի մեծ գետ է կազմում և շուրջ բոլոր մեծամեծ ճահիճներ կազմելով միանում է Քասախ գետին և երկուսն է Արաքս գետը, շատ չնչին տարածութիւններ ուղղելով։ Յարի ժամանակ էջմիածնի վանքն իրաւունք էր ստացել իր ցանկացած քանակով այդ ջրից օգտուելու իր սեպկականութիւն կազմող Վարանապատի դաշտի ռոզգման համար։ Ժամանակին գործը յանձնուց ինչիներնեւրի, որ ծրագրեցին ջրաբերանի առաջ ամրակու պատնէշ կառուցանել, հնարաւոր չափով բարձրացնել ջուրը և ինքնահոս ընթացքով բերել հասցնել վանքապատկան հողերին։ Մասուհայ պատկառելի գումար, 12 թէ 15,000 ուսլրի, կառուցուեց պատնէշը, բայց երևաց որ ինչիներները հաշիւների մէջ սխալուել էին, կառուցուածքները չզգմացան ջրի մեծ ոյժին, քանդեցին պատնէշը և ժողովրդական ասացուած-

քով՝ վտնքի ծախքը սջուրը տարաւ»։

Աւելի աղբւրների ամենամեծը բըղխում է Այդը լճից, մի փոքր լճակ բազալտ քարերի ափերով եկերւած։ Կառավարութիւնը պորձի գլխին կարգեց ինչիներ Երեւմագեանին, որը ծրագրեց Երեւանից, կառավարութեան նոր պարտաստած էլէքտրակայարանից, 1400 ձիւ ուժ փոխադրել մինչև այդ լճակը, այնտեղ շինել մեծ ջրբամբար ջրի մակերեսոյթը 10 մետր բարձր, մեծ ջրհան մեքենաներով ջուրը բարձրացնել ջրամբարը և ինքնահոս աւուով բերել մինչև մշակելիք հողերը։ Մրագրւած 6000 հեկտարից 2475 հեկտարը ներկայումս կինդանացի է այդ ջրով։ Նման ջրհաններ գործում են նաև Ղաճաբլուի շրջանում և ջրհաններով արդէն մշակուած են 4905 հեկտար հողեր։

Գ. — Հայաստանի գետերի մեծ մասը ստորին վայրերում է, նաև քան Արաքս թոփուիլ՝ կազմում են մեծամեծ ճահիճներ։ Այդպէս են Աւելի, Զանգուի, Վեդիի գետերը։ Այդ ճահիճները մեծ շարիք են, ինչպէս յիշեց, իբրև մոծակաբուծ վայրեր և իբրև լուսաղոյն հոտերի անպիտան ցընդներ։ Մալարիան հայ դաշտանակ բնակիչների աղէտն է և դարձրել ընթացքում չզրտեցք որ և է իշխող, որ այդ մեծ աղէտի դէմ միջոցներ ձեռնարկած լինել։ Խորհրդային կառավարութիւնն է, որ հէնց էն գլխից ուժեղ կոխ է յայտարարել այդ աղէտի դէմ բշչական պրոֆիլակտիկ միջոցառումներով, տրոպիկանների հիմնարկներով, ճահիճները նաւթով սրսկելով և որ ամենից գլխաւորն է, ճահիճների աստիճանական շրջացումներով, որով ստացուած են նորանոր պարարտ հողամասեր բամբակամշակման բարձր կուլտուրայի համար։

Ե. — Պատմութեան մէջ ինձ յայտնի չեն դէպքեր թէ երբ և է աշխատանք կատարւած լինի մեր երկրի լուռային գետերի կարգաւորման մասին։ Խորհրդային իշխանութեան երկրորդ տարին էր, որ Երեւանի միջով հոտող, գլխաւորապէս Դըրբուրուաղի աղբւրներից գոյացած Գեառու գետակը, գարնան ձիւնահալքի ժամանակ չափազանց մեծանալով, գուրս եկաւ ափերից և հեղեղեց քաղաքի մեծ մասը, տները ներքենայրկերը լցնելով քար ու

աւազով և մեծ աւեր պատճառելով ուղ-  
գարնակութեանը, երբ խորհրդային բոլոր  
հանրապետութիւններից օգնութիւն եկան  
աղէտեալ ընակչութեանը: Համարեա ամեն  
տարի այս կամ այն գետակա տուճանալով  
մեծ անձրևներից և կամ առատ ձիւնահա-  
լացից աւերում է տներ, այգիներ ու մշակ-  
ւած դաշտեր հեղեղատի յատակ դարձնում:  
անասունների և մարդկանց մեծամեծ զոհե-  
րով: Երբ 1895ին սոսով ճանապարհորդում  
էի Աւստրիական Տիրոջում, զարմացմամբ  
և նախանձով տեսնում էի, որ քաղաքա-  
կիրթ այդ երկրում լեռնային գետակների  
յատակները սալայատակած են, փիերը  
պատերով ամրացրած: Այժմ մեր երկրում  
ևս հաստատուել է մի հարազատ կառավա-  
րութիւն, որ ծրագրային ընթացքով մեր  
գիծ ու ըմբոստ գետերին կարգ է սովոր-  
ցնում, նրանց ճանապարհները շտկում,  
որ այլ ևս մոռանան իրենց դարիւրի տա-  
րէցտարի կրկնեալ աւերն ու մեծամեծ վը-  
նասները:

Չ. — Մեր լեռների փեշերից քվխում  
են բազմաթիւ սառնորակ և անուշահամ  
մեծամեծ աղբիւրներ. բազմաթիւ հեցիաթ-  
ներում զօգաբունեած են այդ անմահական  
ջրերը, սակայն աղբարնակութեան օր  
մասն էր օգտւում այդ ջրերից: Ակունք-  
ներից շատ չհեռացած, ամեն տեսակ ան-  
մաքրութիւնների և հանքային բաղադրու-  
թիւնների ոչնչացնում են այդ ակնաղբիւր-  
ների անմահական յատկութիւնները եւ  
գաշտերում ապրող ժողովուրդն ու կեն-  
դանիները խմում են ինչ որ գտնում են,  
որովհետեւ շատ տեղերում քանակն էլ է  
պակասում: Հին զարեբում աղբիւր չի-  
նելը բարիք և Աստուծոյ գործ էր համար-  
ւում: Իսկ այժմ, գաշտային շատ գիւղե-  
րում արդէն գործում են արտեզեան ջր-  
հորներ և կամ լեռներից բղխող սառնո-  
րակ աղբիւրներ խողովակներով բերած  
կոացած օգտագործման վայրը:

Նախապատերազմեան վերջի տարինե-  
րում Երեւանի մի քանի հազար զանազակա-  
նի, շահագիտական նպատակներով, Ղըրխ-  
բուլաղի աննման աղբիւրից ջուր էին բե-  
րել քաղաքը և վաճառելով ազգարնակու-  
թեան, միայն գնելու ընդունակներին, մե-  
ծամեծ օգուտներ էին ստանում: Այդ ձեռ-  
նարկը հաշւած էր 30ից 40,000 ազգարնաւ

կութեան համար: Երեւանի արագ աճող  
ազգարնակութիւնն արդէն ջրի նեղութիւն-  
ների էր քաշում. ստիպած առուի վատ-  
առողջ և անմաքուր ջուր էր գործ ածում:  
Արագ կերպով դրա տառաջն առնելց. այժմ  
քաղաքի բոլոր թաղամասերում, փողոց-  
ների ոչ հեռաւոր մասերում առատու-  
թեամբ հասում է անուշ և սառնորակ ջու-  
րը և ջրի պահասութեան մասին այլևս ոչ  
ոք չի մտածում: Անցեալ տարի Արագածի  
աղբիւրներից ջուր բերին կասցրին Կարբի  
և Աշտարակ գիւղերը, այս տարի աղբիւրը  
հասաւ Օշակն, իսկ Վաղարշապատը:  
Այս սողերը գրում եմ Մայիսի Նախօրեա-  
կին: Մայիս 1ին Վանքի հանդէպ Շուհում-  
եանի կրպարակում բացւելու է խորհր-  
դային այդ մեծ քաղաքացու արձանը, ար-  
ձանի առաջում մեծ աւազան է պատրաս-  
տած, որի բացման հանդէսը յաւերժանա-  
լու է այդ շատուանի բարձր ցնցուղներով  
դուրս ժայթքով Արագածի փեշերից բերած  
կոացրած սառնորակ զուլալ աղբարջուրը,  
ժողովրդի ցնծութիւնն, ուրախութիւնը  
կատարելալ դարձնելով:

Քանիցս յիշատակած զեկուցումը պու-  
րունակում է 28 անունների ջրաշինարարա-  
կան արդէն աւարտած ձեռնարկների, յի-  
շատակում է մի շարք ծրագրած և մօտիկ  
պագայում գլուխ բերիլիք մեծամեծ և  
փոքր աշխատանքների նոյն ուղղութեամբ  
և նպատակով:

Այս համառօտ ակնարկը և հնարաւոր  
չափով ի մի կաւաքած պատմական տեղե-  
կութիւնների տալով ընթերցողին հնք թող-  
նում միմեանց հետ համեմատելու հիշն ու  
նորը և եզրակացութիւնների հանելու:

Ջգալի կերպով փոխում է երկրի կլի-  
ման, անապատների և անջրդի տեղերի  
մշակումով և մեծ չափերի պտղատու ծա-  
ռերի, խաղողի այգիների և այլ ծառերի  
տարէցտարի աճող քանակով:

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՆԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊՍԿ.

— Վ Ե Ր Զ —

